Հ-39

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԵՎԱ ՎԻԿՏՈՐԻ

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԾՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ (1981-2011 ԹԹ.)

Է. 00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Հայցվող աստիճանը չունի
դասակարգային սահմանափակումներով
ու բարձրագույն սահմանափակումներով:

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հովհաննիսյան Ն. Հ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր Կարապետյան Ռ. Կ.

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Գևորգյան Գ. Գ.

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. նոյեմբերի 18-ին, ժ. 15:00, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ ք. Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան 24/4, 11-րդ հարկ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. հոկտեմբերի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար պ.գ.թ., դոցենտ Պ.Ղազարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Պարսից (Արաբական) ծոցը (այսուհետ՝ Ծոցը) քաղաքական, էներգետիկ, տրանսպորտային և առևտրային տեսանկյուններից կարևորագույն տարածաշրջաններից է աշխարհում: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում այն դարձել է ամենալարված աշխարհագրական գոտիներից մեկը: Քաղաքական խնդիրները, հակամարտությունները, բնական ռեսուրսներին տիրելու՝ տերությունների կողմից իրականացվող ծրագրերը, արաբական միապետությունների ներքին և արտաքին քաղաքական կողմնորոշումները բազմիցս դարձել են աշխարհի տարբեր երկրների գիտնականների հետազոտության առարկան: Նման հետաքրքրությունը պայմանավորված է համաշխարհային տնտեսությունն էներգակիրներով ապահովելու Ծոցի ռազմավարական նշանակությամբ:

Քննարկվող ժամանակաշրջանում լինելով աշխարհի երկրորդ տնտեսական գերտերությունը* և զուրկ լինելով բնական ռեսուրսներից՝ Ճապոնիան մեծ կախում ունի էներգակիրների ներկրումից, մասնավորապես Ծոցի երկրներից. տարածաշրջանում արդյունահանված նավթի 55%-ն արտահանվում է Ճապոնիա՝ ապահովելով երկրի նավթային պահանջարկի 90%-ը: Այդ պատճառով Ճապոնիայի տնտեսության համար Ծոցը կենսական կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջան է:

Ճապոնիան համագործակցում է Ծոցի արաբական երկրների հետ ինչպես տարածաշրջանային կազմակերպության՝ Ծոցի համագործակցության խորհրդի (ԾՀԽ) շրջանակներում, այնպես էլ յուրաքանչյուր պետության հետ առանձին-առանձին:

ԾՀԽ-ն ստեղծվել է 1981 թ. մայիսի 25-ին Ծոցի միապետական կարգեր ունեցող արաբական վեց պետությունների՝ Արաբական Միացյալ Էմիրությունների, Բահրեյնի, Կատարի, Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի և Օմանի միջև տարածաշրջանային կազմակերպության ստեղծման վերաբերյալ միասնական պայմանագրի ստորագրման արդյունքում:

Թեմայի համակողմանի ուսումնասիրությունն արդիական է ոչ միայն Ճապոնիայի արտաքին քաղաքականությունը Ծոցի տարածաշրջանում ավելի խորը հասկանալու, այլև թե՛ Ճապոնիայի, թե՛ ԾՀԽ-ի անդամ երկրների մոտեցումները տարածաշրջանային և միջազգային խնդիրների շուրջ ավելի հստակ ընկալելու տեսանկյունից:

Հետազոտության թեման արդիական է նաև այն առումով, որ ուսումնասիրվում է Ճապոնիայի և ԾՀԽ-ի անդամ երկրների երկկողմ հարաբերությունների զարգացման դինամիկան ԾՀԽ-ի ստեղծումից մինչև 2011 թ.՝ ընդգրկելով 30 տարվա պատմություն: Ներկայումս համաշխարհային

* Մինչև 2010 թ. ըստ ՀՆԱ-ի տվյալների Ճապոնիան երկրորդ տեղում էր՝ զիջելով միայն ԱՄՆ-ին: Այժմ այն զբաղեցնում է երրորդ տեղը՝ ԱՄՆ-ից և Չինաստանից հետո:

պատմության և քաղաքագիտության մեջ դեռևս գոյություն չունեն համալիր հետազոտություններ, որոնք դիտարկում են Ճապոնիայի և Ծոցի արաբական միապետությունների միջև համագործակցության մակարդակը: Այդ պատճառով «Ճապոնիայի քաղաքականությունը Պարսից ծոցի տարածաշրջանում և Ծոցի համագործակցության խորհուրդը (1981-2011 թթ.)» վերնագրով աշխատությունը ներկայացնում է մեծ հետաքրքրություն. իր բնույթով լինելով առաջինը՝ համապարփակ ներկայացնում է Ծոցի տարածաշրջանում տեղի ունեցող ներքաղաքական և արտաքին քաղաքական գործընթացներն ու Ճապոնիայի դիրքորոշումը դրանց նկատմամբ:

Հետազոտության նպատակները և խնդիրները: Սույն ատենախոսության նպատակն է դիտարկել Ճապոնիայի քաղաքական և տնտեսական հարաբերությունները Ծոցի համագործակցության խորհրդի անդամ երկրների հետ՝ վերլուծելով հարաբերությունների զարգացման ընթացքը և հաշվի առնելով թե՛ տարածաշրջանային, թե՛ միջազգային զարգացումները, ինչպես նաև կողմերի դիրքորոշումը մի շարք տարածաշրջանային խնդիրների լուծման շուրջ: Հետազոտության թեման ընտրելիս հաշվի է առնվել երկու կողմերի միջազգային կարևոր գործոն լինելու հանգամանքը: Թեմայի բազմակողմ վերլուծության համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել Ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականության ձևավորման պատճառները:
2. Հետազոտել սառը պատերազմի տարիներին Ճապոնիայի արտաքին քաղաքականությունը մերձավորարևելյան, մասնավորապես Ծոցի տարածաշրջանում, երբ Ճապոնիան, անվտանգության շահերից ելնելով, ձգտում էր չփչացնել հարաբերություններն իր դաշնակցի՝ ԱՄՆ-ի հետ, և տնտեսական շահերից ելնելով՝ պահպանել հարաբերությունները նավթարդյունահանող արաբական երկրների հետ:
3. Դիտարկել աշխարհաքաղաքական այն նախադրյալները, որոնք խթանեցին ԾՀԽ-ի ստեղծումը:
4. Ցույց տալ Իրան-իրաքյան պատերազմի արդյունքում առաջացած նավթային ճգնաժամի ազդեցությունը թե՛ ԾՀԽ-ի երկրների, թե՛ Ճապոնիայի տնտեսության վրա, ուսումնասիրել ԾՀԽ-ի անդամ երկրների դերը նավթային ճգնաժամի, ինչպես նաև Ճապոնիայի կիրառած ջանքերն Իրան-իրաքյան հակամարտության կարգավորման հարցերում:
5. Ուսումնասիրել Ճապոնիայի և ԾՀԽ-ի անդամ երկրների դիրքորոշումն Իրաքի կողմից Քուվեյթին բռնակցելու խնդրի շուրջ, ինչպես նաև երկու կողմերի ջանքերը՝ վերականգնելու Քուվեյթի ինքնիշխանությունն ու վնասված տնտեսությունը:
6. Հետազոտել Ծոցի նավթարդյունահանող երկրների քաղաքականությունն ՕՊԵԿ-ի շրջանակներում, և ՕՊԵԿ-ի դերը նավթային ճգնաժամերի և տարածաշրջանային խնդիրների լուծման հարցերում:

7. Ուսումնասիրել այն պատճառները և նախադրյալները, որոնք ստիպեցին Ճապոնիային ակտիվացնել իր մերձավորարևելյան քաղաքականությունը հետսառըպատերազմյան շրջանում, ինչպես նաև մեծացնել իր ռազմաքաղաքական դերը Ծոցում:
8. Մանրամասն ուսումնասիրել Ճապոնիայի երկկողմ հարաբերությունները ԾՀԽ-ի անդամ երկրներից յուրաքանչյուրի հետ առանձին - առանձին հարաբերությունների հաստատման օրվանից մինչև 2011 թ.:

Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսությունն իր բովանդակությամբ ու հարցադրումներով առաջինն է, որտեղ փորձ է արվում համալիր կերպով ուսումնասիրել Ճապոնիայի քաղաքականությունը Ծոցի տարածաշրջանում, ներկայացնել Ճապոնիայի քաղաքական և տնտեսական հարաբերությունները ԾՀԽ-ի անդամ երկրների հետ և հնարավորինս հանգամանալից ցույց տալ երկու կողմերի դիրքորոշումը տարածաշրջանում առկա մի շարք խնդիրների հանդեպ, ինչպես նաև ուսումնասիրել Ճապոնիայի և ԾՀԽ-ի անդամ երկրների դերն այդ խնդիրների լուծման հարցում՝ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք օտարալեզու պաշտոնական փաստաթղթեր և տեղեկագրեր:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1981 թվականից՝ Ծոցի համագործակցության խորհրդի ստեղծումից, մինչև 2011 թվականը՝ չներառելով 2011 թ. սկզբին արաբական երկրներում տեղի ունեցած ըմբոստությունների շարքը, որը հայտնի է նաև «Արաբական գարուն» անվամբ, քանի որ վերոնշյալ իրադարձությունները շրջադարձային եղան արաբական երկրների համար՝ փոխելով ողջ աշխարհաքաղաքական իրադրությունը, որի ուսումնասիրությունը կարող է նոր հետազոտության թեմա լինել:

Ըստ հետազոտության տրամաբանության՝ անհրաժեշտ է համարվել աշխատանքի սկզբում հակիրճ անդրադառնալ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ճապոնիայում ստեղծված քաղաքական իրադրությանը, պետության կողմից իրականացվող բարեփոխումների գործընթացին, որը նպաստեց երկրի տնտեսության զարգացմանը: Արդեն 1960-ականների վերջին դառնալով զարգացած տնտեսություն ունեցող երկրորդ տերությունն աշխարհում և չունենալով սեփական բնական ռեսուրսներ՝ Ճապոնիայի մենաշնորհային ընկերությունները «Արդյունաբերության արդիականացման» կարգախոսի ներքո էներգետիկ և արդյունաբերական ընկերություններում քարածխի փոխարեն որպես վառելանյութ սկսեցին օգտագործել նավթը, որն այդ տարիների ամենաէժան վառելանյութն էր: Այսպիսով՝ սկիզբ դրվեց Ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականության ձևավորմանը, որտեղ առանձնահատուկ տեղ տրվեց Ծոցի նավթարդյունահանող արաբական երկրների հետ տնտեսական և քաղաքական հարաբերությունների զարգացմանը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Աշխատանքի մեթոդաբանական հիմքում ընկած է պատմավերլուծական քննության մեթոդը:

Ճապոնիայի քաղաքականությունը Ծոցի տարածաշրջանում դիտարկվել է բազմաթիվ տեղեկագրերի, փաստաթղթերի, մամուլի և ուսումնասիրությունների համադրման միջոցով, որը հնարավորություն է տվել թեման ուսումնասիրել մեկ ամբողջության մեջ՝ կիրառելով բովանդակային վերլուծության մեթոդը (կոնտենտ անալիզ): Ելնելով հետազոտության թեմայի բազմաշերտ ու բազմակողմ բնույթից՝ աշխատանքում օգտագործվել են աղբյուրագիտական նյութի քննական վերլուծությունն ու փաստերի համեմատական-համադրման ուսումնասիրությունը: Հաշվի առնելով տարբեր տվյալների ու մեծածավալ փաստերի օգտագործումը՝ կիրառվել է նաև վիճակագրական տվյալների համակարգում և վերլուծություն:

Աշխատության գործնական և քաղաքական նշանակությունը: Աշխատանքն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական-կիրառական նշանակություն: Ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթները, մեկնաբանությունները և եզրահանգումները կարող են օգտագործվել Ծոցի երկրների հետ Ճապոնիայի հարաբերություններին նվիրված ուսումնասիրություններում, ինչպես նաև թեմային առնչվող հետագա հետազոտությունների համար, կիրառվել դասախոսություններում և քաղաքագիտական ուղղվածությամբ հատուկ դասընթացներում: Աշխատության դրույթները կարող են օգտակար լինել նաև պետական համապատասխան գերատեսչությունների ու մարմինների համար տեղեկագրային ու վերլուծական նյութերի պատրաստմանը:

Աշխատության փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի կողմից: Նրա փորձաքննությունն իրականացվել է երեք մակարդակով.

Առաջին՝ սույն ատենախոսության փորձաքննության համար մեծ նշանակություն ունեցավ ատենախոսության քննարկումը և հրապարակային պաշտպանության երաշխավորումը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Արևելյան Ասիայի երկրների, Մերձավոր Արևելքում միջազգային ու տարածաշրջանային հարաբերությունների և Արաբական երկրների բաժինների համատեղ քննարկման արդյունքում:

Երկրորդ՝ աշխատության փորձաքննության համար շատ կարևոր էր 2012 թվականին հեղինակի Ճապոնիա կատարած երկամյա գիտական գործուղումը, որի ժամանակ հնարավորություն ընձեռնվեց աշխատությունը ներկայացնել Ճապոնիայի մի շարք գիտական կենտրոնների և ինստիտուտների ու կազմակերպել նրա քննարկումը, մասնավորապես Ճապոնիայի միջազգային հարաբերությունների ինստիտուտում (Japan Institute of International Affairs), Ճապոնիայի էներգետիկ տնտեսության ինստիտուտում (The Institute of Energy Economics, Japan), Ժամանակակից իսլամական ուսումնասիրությունների կենտրոնում (Center for Contemporary Islamic Studies), Խաղաղության ու անվտանգության հետազոտական ինստիտուտում (Research Institute for Peace and Security), ինչպես նաև Կանսայ ճապոներեն լեզվի ինստիտուտում (Japanese-

Language Institute, Kansai): Հատկապես կարևոր է նշել Կանսայ ճապոներեն լեզվի ինստիտուտում կազմակերպված միջոցառման մասին, որի ժամանակ հեղինակի կողմից ճապոներենով ներկայացվել է ոչ միայն Հայաստանը՝ իր պատմամշակութային առանձնահատկությամբ, այլև ատենախոսության հիմնական դրույթները, որոնք արժանացել են դրական գնահատականի ճապոնացի հետազոտողների կողմից:

Անշուշտ, անգնահատելի են նաև ատենախոսության թեմայի վերաբերյալ այն նյութերը և գիտական աշխատությունները, որոնք ձեռք են բերվել Կանսայ ինստիտուտի, Օսակայի և Տոկիոյի գրադարաններից:

Երրորդ՝ մեծ նշանակություն ունեցավ ատենախոսության փորձաքննության համար նաև 2013 թ. Մոսկվայի արևելագիտության ինստիտուտում կայացած «Ճապոնիան Ասիայում՝ տարածաշրջանային հարաբերությունների հեռանկարները և իրադրությունը» գիտաժողովին մասնակցությունը, որտեղ ատենախոսը հանդես է եկել «Ճապոնիայի նավթային ծովային ուղիներին սպառնացող անվտանգության խնդիրների շուրջ» թեմայով զեկուցմամբ և միևնույն ժամանակ քննարկման է ներկայացրել ատենախոսության հիմնական հիմնադրույթները:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները լուսաբանվել են հրատարակված գիտական հոդվածներում, տեղական և միջազգային մի շարք գիտաժողովներում ներկայացված զեկուցումներում:

Օգտագործված աղբյուրների և գրականության տեսություն: Աշխատությունը շարադրված է հայերեն, ռուսերեն, անգլերեն և ճապոներեն տարաբնույթ աղբյուրների, գիտական ուսումնասիրությունների, մասնավորապես պաշտոնական փաստաթղթերի, պարբերականների, հայ և օտարազգի հետազոտողների՝ խնդրո առարկա թեմային նվիրված աշխատությունների ու հոդվածների քննական հետազոտության և վերլուծության հիման վրա: Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուր ծառայել են Ճապոնիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ «Diplomatic Bluebook» կոչվող տարեգրքերը[1], ԾՀԽ-ի անդամ երկրների ու Ճապոնիայի միջև կնքված պայմանագրերի վերաբերյալ Ճապոնիայի արտգործնախարարության պաշտոնական փաստաթղթերը և հրապարակումները[2], ԾՀԽ-ի անդամ երկրների

[1] Diplomatic Bluebook, Tokyo, 1986, 1991, 1992, 1999.

[2] Call for Early Launch of Negotiations for Japan-GCC Economic Partnership Agreement, http://www.keidanren.or.jp/english/policy/2005/060.html; Fact Sheet: List of Memoranda of Japan-UAE Cooperation, http://www.mofa.go.jp/files/000004142.pdf; Joint Statement between Japan and the Kingdom of Bahrain, http://www.mofa.go.jp/region/middle_e/bahrain/joint0802.html; Joint Statement between Japan and the United Arab Emirates, http://www.mofa.go.jp/region/middle_e/pmv0704/joint_uae.html; Joint Statement between the Kingdom of Saudi Arabia and Japan, 28-29.04.2007, http://www.mofa.go.jp/region/middle_e/ pmv0704/joint_saudi.html; Joint Statement on Strengthening the Bilateral Economic Relations between Japan and Qatar, 4.10.2011, http://www.mofa.go.jp/region/middle_e/qatar/joint1110.html; Joint Statement towards the Building

միջև կնքված պայմանագրերն ու փաստաթղթերը[3], Ճապոնիայի արտաքին քաղաքականությանը և տնտեսական պատմությանը նվիրված Ճապոնալեզու վերլուծական նյութերը[4], ՄԱԿ-ի փաստաթղթերը[5], Միջին և Մերձավոր Արևելքի քաղաքական զարգացմանը նվիրված բյուլետենները և ամսագրերը[6], բարձրաստիճան այրերի պաշտոնական ելույթները[7]:

Մյուս կարևոր աղբյուրը Ճապոներենով և անգլերենով հրատարակված զանազան պարբերականներն են, որոնցից հարկ է առանձնացնել Ճապոնալեզու あさひ («Ասահի»), まいにち «Մաինիտի», 日本経済 «Նիհոն կեիձաի», անգլալեզու «Asia Times»-ը, «Bahrain News Agency»-ը, «Daily Yomiuri»-ն, «Financial Times»-ը, «Fortune»-ը, «Japan Echo»-ը, «Japan Press»-ը, «Kuwait News Agency»-ը, «Kyodo News Service»-ը, «New York Times»-ը, «News Week»-ը, «Nippon Times»-ը, «Oil and Gas Journal»-ը, «Petroleum Economist»-ը, «The Japan Times»-ը, «The Middle East»-ը, «The Washington Post»-ը, «Washington Star»-ը և այլն, որտեղ տեղ են գտել Ճապոնիայի և Ծոցի երկրների քաղաքականության մասին հարուստ տեղեկություններ ու վերլուծություններ:

Ատենախոսությունում օգտագործվել են Ճապոնացի մի շարք հեղինակների աշխատություններ՝ նվիրված Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ճապոնիայում ձևավորված ներքին և արտաքին քաղաքականությանը, Ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականության ձևավորմանը և Ծոցի

---

of Strategic and Multi-layered Partnership between Japan and the Kingdom of Saudi Arabia, http://www.mofa.go.jp/region/middle_e/saudi/joint0604.html

[3] Хартия о создании Совета Арабского Сотрудничества, http://www.worldislamlaw.ru/archives/179; The Economic Agreement between the GCC States, Adopted by the GCC Supreme Council (22nd Session; 31.12.2001) in the City of Muscat, Sultanate of Oman, http://sites.gcc-sg.org/DLibrary/download.php?B=168; The Unified Economic Agreement between Countries of Gulf Cooperation Council, Riyad, 11.11.1981, http://www.sagia.gov.sa/Documents/Int%20_agreement/Agreement%20of%20Gulf%20Cooperation%20Council.pdf

[4] 占領下日本の分析 («Սենրյոկա նիպոնոն բունսեկի»՝ «Ճապոնիայի օկուպացման պայմաններին վերաբերող վերլուծություն»), Kyoto, 1955; 外交青書 («Գաիկոու սենսյո»՝ «Կապույտ գիրք՝ արտաքին քաղաքականության վերաբերյալ»), Tokyo, 2009; 現代日本経済指標 («Գենդայ նիհոն կեիձասի հյոու»՝ «Ժամանակակից Ճապոնիայի տնտեսական պատմություն»), Tokyo, 1975.

[5] Treaty of Peace with Japan, United Nations Treaty Series 1952 (reg. no. 1832), vol. 136; An Argument for Japan's Becoming Permanent Member of the United Nations Security Council, http://www.mofa.go.jp/policy/q_a/faq5.html.

[6] Атлас-Еженедельный вестник иностранной информации ТАСС, 1965, 1974, 1978, 1984; Бюллетень Почтовой информации ТАСС, 1979, 1981, 1982, 1984, 1989; Middle East Economic Digest, 1969, 1981, 1986; The Energy Journal, 1997; A Journal of Regional and International Affairs, 1997; Journal of South Asian and Middle Eastern Studies, 1982; Turkish Journal of International Relations, 2008; Humanity and Social Sciences Journal, 2008.

[7] Carter J., "The State of the Union", January, 1980, Weekly Compilation of Presidential Documents, Vol. 16, 28.01.1980; Exclusive Interview: Shinzo Abe, 31.10.2006, http://www.ft.com/cms/s/0/ba65e892-68f6-11db-b4c2-0000779e2340.html#axzz2HNxcl8XE

երկրների հետ հարաբերությունների հաստատմանը, ԾՀԽ-ի ստեղծման նախադրյալներին, Ճապոնիայի «Պաշտոնական զարգացման աջակցություն» ծրագրի շրջանակներում Ծոցի երկրներին տրամադրվող օգնությանը, Ճապոնիայի արտաքին քաղաքականությանը հետսառըպատերազմյան շրջանում և նրա ռազմաքաղաքական դերի ակտիվացմանը: Հարկ է առանձնացնել Ա. Իկեդայի, Ա. Մորիտայի, Դ. Սեկինեի, Կ. Հաշիմոտոյի, Կ. Չիբայի, Կ. Սուզիհարայի, Կ. Տոզոյի, Հ. Աբեյի, Մ. Կավայի, Յ. Ուեկիի, Շ. Հոսակայի, Ս. Տոմոհիտոյի, Տ. Ինոգուչիի, Տ. Նակամուրայի և այլոց հոդվածներն ու աշխատությունները[8]: Սույն աշխատությունը գրելիս օգտվել ենք նաև Ճապոնացի Յուկիկո Միյազայի «Ճապոնիայի մերձավորարևելյան անվտանգության քաղաքականությունը. Տեսություն և դեպքեր» մենագրությունից[9], որտեղ հեղինակը դիտարկում է, թե ինչպես է ձևավորվել Ճապոնիայի քաղաքականությունը մերձավորարևելյան տարածաշրջանում, որի ժամանակ փորձում էր մի կողմից պահպանել դաշնակցական հարաբերություններն ԱՄՆ-ի հետ, իսկ մյուս կողմից՝ չփչացնել մերձավորարևելյան երկրների հետ ունեցած տնտեսական հարաբերությունները: Յուկիկո Միյազան ներկայացնում է Ծոցում Ճապոնական քաղաքականության ձևավորման պատմական հիմքերը, այնուհետև կենտրոնանում է Ծոցի տարածաշրջանում առկա մի շարք արդի խնդիրների վրա (Իրան-իրաքյան պատերազմ, արաբ-իսրայելական հակամարտություն)՝ ցույց տալով Ճապոնիայի դիրքորոշումն այդ խնդիրների նկատմամբ: Թեմայի հետազոտության համար կարևոր է նաև Ճապոնիայի միջազգային հարաբերությունների ինստիտուտի դասախոս Ս. Տոմոհիտոյի «Կոիձումիի դիվանագիտությունը. Ճապոնիայի պաշտոնական մոտեցումն արտաքին

---

[8] Ikeda A., Seeking a Say for Her Pay, Middle East Dialogue, November 1994; Морита А., Сделано в Японии, М., 1990; Sekine D., Seapower and Japan's Maritime Coalition Building, Australia, 2011; Hashimoto K., Elass J., Eller S., Liquefied Natural Gas from Qatar: The Qatargas Project, Natural Gas and Geopolitics, from 1970-2040, Cambridge, 2006; Chiba K., Japan and the Middle East in the 1970s and Early 1980s: A Japanese Diplomat's View, London, 1993; Sugihara K., Allan J., Japan in the Contemporary Middle East, London, 1993; Togo K., Japan's Foreign policy, 1945-2003, The Quest for a Proactive policy, Boston, 2005; Abe H., Regional Integration in the Gulf: the Background to the Formation of the GCC, Working papers series, No.9; Kawai M., Takagi S., Japan's Official Development Assistance: Recent Issues and Future Directions, No. 97, July 2001; Ueki Y., Japan's UN diplomacy: Sources of Passivism and Activism, Japan's Foreign Policy after Post – Cold War: Coping with Changes, N. Y., 1993; Hosaka S., Japan and the Gulf: A Historical Perspective of Pre-Oil Relations, Kyoto Bulletin of Islamic Area Studies, 2011; Tomohito S., Becoming More Realistic in the Post-Cold War: Japan's Changing Media and Public Opinion on National Security, Japanese Journal of Political Science, No. 8, June, 2007; Inoguchi T., Purnendra J., Japanese Politics Today : Beyond Karaoke Democracy, N.Y., 1997; Nakamura T., Economic Development of Modern Japan, Japan, 1985.

[9] Miyagi Y., Japan's Middle East Security Policy: Theory and Cases, London, 2008.

քաղաքականության և ռազմական ոլորտների նկատմամբ» մենագրությունը[10], որտեղ մանրամասնորեն դիտարկվում է Ճապոնիայի վարչապետ Ջունիչիրո Կոիձումիի քաղաքականությունը, որը նոր շունչ հաղորդեց 1990-ականներից տնտեսական ճգնաժամի մեջ գտնվող Ճապոնիային: 2001 թ. կտրուկ փոխվեց Ճապոնիայի քաղաքականության ռազմավարությունը, որն ուղղված էր առաջին հերթին Ճապոնիայի ռազմական և քաղաքական դիրքերի ամրապնդմանը ոչ միայն Ասիայում, այլև Ծոցի տարածաշրջանում: Մենագրությունում հեղինակը, բացի սեփական վերլուծություններից և հսկայական փաստագրական տեղեկություններից, ներկայացրել է նաև մի շարք անձնական հարցազրույցներ, որոնք վերցրել է Ճապոնիայի նախկին վարչապետների և մի շարք բարձրաստիճան այրերի հետ ունեցած հանդիպումների ընթացքում: Այս աշխատանքն ուրույն ներդրում է հստակ հասկանալու համար Ճապոնիայի արդի քաղաքականությունը միջազգային հարաբերություններում:

Արևմտյան հեղինակներից հիշատակման արժանի են Ռ. Արմիթաջի, Մ. Բերգերի, Ա. Դոութիի, Յ. Իբրահիմի, Ջ. Լիվինգստոնի, Մ. Խադուրիի, Թ. Կելների, Ջ. Կոստիների, Վ. Մրքբինի, Բ. Ռեյխի, Ջ. Կրիստալի և այլոց մենագրությունները, հոդվածներն ու հրատարակումները[11], որտեղ լուսաբանվում են ԾՀԽ-ի երկրների միջև առկա հակասությունները, Ծոցի տարածաշրջանում առկա տարածքային վեճերը, ՕՊԵԿ-ի քաղաքականությունը, Ճապոնիայի տնտեսության համար կենսական կարևորություն ներկայացնող նավթային ծովային ուղիների անվտանգությանը սպառնացող խնդիրները, հետսառըպատերազմյան շրջանում Ճապոնիայի արտաքին քաղաքականության փոփոխությանը խթանող նախադրյալները:

Հարկ է նշել, որ հայ արևելագիտությունը լավագույնս ուսումնասիրել է Մերձավոր Արևելքի, մասնավորապես Ծոցի տարածաշրջանի երկրների պատմությունն ու արտաքին հարաբերություններին առնչվող հարցերը, ինչպես նաև ՕՊԵԿ-ի նավթային քաղաքականությունը: Հարկ է առանձնացնել Ռ. Անդրեասյանի, Ա. Արաբաջյանի, Վ. Բայբուրդյանի, Գ. Գևորգյանի, Ռ. Ինճիկյանի,

[10] Tomohito S., Koizumi Diplomacy: Japan's Kantei Approach to Foreign and Defense Affairs, Washington, 2007.

[11] Armitage R., U.S.-Japan Relations in the Middle East, Washington, D.C.: The Middle East Institute, 1998; Berger M., Japan Debates a New Role: Facing the Mideast Crisis, The New Leader, No. 73, 17.09.1990; Dowty A., Japan and the Middle East: Signs of Change?, Middle East Review of International Relations, Vol. 4, No. 4, December, 2000; Ibrahim Y., Attack on the Role of Saudi Arabia in OPEC, Wall Street Journal, N.Y., 1982; Livingston J., Moore J., Oldfeather F., Postwar Japan, 1945 to the present, N. Y., 1973; Khadduri M., Ghareeb E., War in the Gulf (1990-1991), The Iraq-Kuwait Conflict and Its Implications, N. Y., 1997; Kellner T., The GCC States of the Persian Gulf and Asia Energy Relations, 2012; Kostiner J., Conflict and Cooperation in the Gulf Region, London, 2009; McKibbin W., The Macroeconomic Experience of Japan since 1990: An Empirical Investigation, Washington DC, 1996; Reich B., Cutler C., Japan, The Powers in the Middle East: The Ultimate Strategic Arena, N. Y., 1987; Crystal J., Oil and Politics in the Gulf, Rulers and Merchants in Kuwait and Qatar, Cambridge, 1999.

Լ. Կեշիշյանի, Ջ. Կեչիչյանի, Ե. Մելքումյանի և այլոց մենագրություններն ու հոդվածները[12]: Հատկապես հետազոտությանը մեծապես աջակցել են հայ արաբագետ, միջազգայնագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բազմավաստակ Նիկոլայ Հովհաննիսյանի արժեքավոր ուսումնասիրությունները նվիրված ինչպես Ճապոնիային, այնպես էլ Ծոցի երկրներին[13]: Հարկ ենք համարում հատուկ հիշատակել «Հայաստան-Ճապոնիա» երկլեզու առաջին աշխատության մասին[14], որը Ճապոնացի հետազոտողների հետ կատարած համատեղ աշխատանքի արդյունք էր: Աշխատության մեջ, բացի հայ հետազոտողների ուսումնասիրությունները, տեղ են գտել նաև Ճապոնացի Մասակո Ֆուձիտայի, Ակիկո Հիկիի և Հիդեհարու Նակաձիմայի հետազոտությունները:

Ատենախոսության համար մեծ դեր են ունեցել նաև Ռուբեն Կարապետյանի ուսումնասիրությունները՝ նվիրված Ճապոնիայի արտաքին քաղաքականությանը Ծոցի տարածաշրջանում և վերջինիս ռազմական դերի ակտիվացմանը[15]:

Ռուս հեղինակներ Վ. Բասկինը, Ա. Բոգատուրովը, Ե. Բոգոյավլենսկայան, Ա. Գեորգիևը, Ա. Դինկևիչը, Բ. Մալիկովը, Է. Մոլոդյակովան, Ու. Շարիպովը, Դ. Պետրովը, Յա. Պնգները, Լ. Վալկովան, Ս. Վերբիցկին, Վ. Օզոլինգը, Ա. Ֆիլոնիկն[16]

[12] Андреасян Р., Казюков А., ОПЕК в мире нефти, М., 1978; Арабаджян А., О государственной политике ИРИ, Специальный бюллетень, N 5, М., 1988; Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Երևան, 2005; Գևորգյան Գ., Իրաք-իրանյան տարածքային-սահմանային հակասությունների հարցի շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, Երևան, 2005; Инджикян Р., ОПЕК в мировом капиталистическом хозяйстве, М., 1983; Keshishyan L., Middle East, London, June, 1979; Kechichian J., Oman and the World, The Emergence of an Independent Foreign Policy, Santa Monica, 1995; Мелкумян Е., Кувейт в 60-80-е годы, Социально-политические процессы и внешняя политика, М., 1989.

[13] Հովհաննիսյան Ն., Իրան, Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004; Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., III, Երևան, 2006; Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., IV, Երևան, 2007; Оганесян Н., Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985.

[14] Հովհաննիսյան Ն., Ամիրխանյան Մ., Կարապետյան Ռ., Հայաստան-Ճապոնիա, Քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական հարաբերություններ, Երևան, 2005:

[15] Կարապետյան Ռ., Իրաքում Ճապոնիայի ռազմական ներկայության վերաբերյալ, Արևելաասիական ուսումնասիրություններ, I, Երևան, 2009:

[16] Баскин В., Нефтяные монополии на Ближнем и Среднем Востоке, М., 1957; Богатуров А., Японская дипломатия в борьбе за источники энергетического сырья (70-80-е годы), М., 1988; Богоявленская Е., Япония на совещаниях «Большой семерки» (от Рамбуйе до Токио, 1975-1986 гг.), М., 1986; Георгиев А., Озолинг В., Нефтяные монархии Аравии : Проблема развития, М., 1983; Динкевич А., Экономика послевоенной Японии (1945-1955г.), М., 1958; Маликов Б., Совет Сотрудничества Арабских государств Залива, М., 1994; Молодяков В., Молодякова Э., Маркарьян С., История Японии. XX век, М., 2007; Шарипов У., Персидский залив: обострение политической и военной ситуации и международных отношений в конце XX - начале XXI вв., М., 2010; Петров Д., Внешняя политика Японии после Второй мировой войны, М., 1968;

և այլք իրենց ուսումնասիրություններում ևս տարբեր առումներով անդրադարձել են հետպատերազմյան շրջանում Ճապոնիայի արտաքին քաղաքականությանը և տնտեսությանը, Ծոցի տարածաշրջանում նավթային մենաշնորհային ընկերությունների գործունեությանը, Ճապոնիայի հարաբերություններին Ծոցի երկրների հետ նավթային ճգնաժամերի ընթացքում, ԾՀԽ-ի անդամ երկրների քաղաքականությանն ու տնտեսությանը: Մասնավորապես ռուս հեղինակներից Ի. Նոսովան իր «Ճապոնիայի էներգետիկ դիվանագիտությունը» հոդվածում ներկայացնում է Ճապոնիայի հարաբերությունները ԾՀԽ-ի անդամ երկրների հետ՝ ուսումնասիրելով էներգետիկ ոլորտում երկու կողմերի հարաբերությունների զարգացման դինամիկան[17]:

Մեծ արժեք են ներկայացնում նաև մի քանի արաբ, թուրք և պարսիկ պատմաբանների, քաղաքագետների և միջազգայնագետների, մասնավորապես Աբդ ալ-Հադի Խալաֆի, Ալ-Ֆարսի, Շեյխ Ալիի, Շ. Ռաքյուլ, Ս. Օզցելիկի և այլոց ուսումնասիրությունները[18], որոնք վերաբերում են Իրաք-քուվեյթյան հակամարտությանը, տարածաշրջանում Սաուդյան Արաբիայի դերին և նրա արտաքին քաղաքականությանը, Ճապոնիայի արտաքին քաղաքականությանը Ծոցում, ինչպես նաև նրա ռազմաքաղաքական դերի ակտիվացմանը տարածաշրջանում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, օգտագործված հապավումների ցանկից և հավելվածից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը և գիտական նորույթը, ներկայացված են հիմնական նպատակներն ու նշանակությունը և թեմայի ժամանակագրական սահմանների ընտրությունը, տրվում է օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունն ու թեմայի ուսումնասիրության աստիճանը:

Певзнер Я., Экономика Японии после Второй мировой войны, М., 1955; Валькова Л., Саудовская Аравия: нефть, ислам, политика, М., 1987; Вербицкий С., Япония : Время сложных проблем, М., 1974; Озолинг В., Экономика Саудовской Аравии, М., 1975; Исаев В., Филоник А., Кувейт: контуры экономических перемен (опыт развития в условиях перехода от избытка к относительному дефициту капиталов), М., 2003.

[17] Носова И., Энергетическая дипломатия Японии, Ежегодник, Япония 2004-2005, М., 2005.

[18] Abd al-Hadi Khalaf, The Elusive Quest for Gulf Security, Middle East Report, Volume 17, Washington, 1987, http://www.merip.org/mer/mer148/elusive-quest-gulf-security; Al-Farsi F., Saudi Arabia: A Case Study in Development, London, 1978; Sheikh Ali, Oil and Power: Political Dynamics in the Middle East, London, 1987; Raquel S., Japan's Changing Defense Policy: Military Deployment in the Persian Gulf, Japanese Studies, Volume 27, No. 3, December, 2007; Özçelik S., The Japanese Foreign Policy of the Middle East between 1904-1998: Resource, Trade and Aid Diplomacy, Humanity and Social Sciences Journal, 2008.

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«ՃԱՊՈՆԻԱՆ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱԾՈՒՄԸ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՈՆԻ (1946-1980 ԹԹ.)»**, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին՝ ***«Հետպատերազմյան Ճապոնիան և նրա վերածումը զարգացած տնտեսական պետության (1946-1970 թթ.)»*** ենթագլխում ներկայացվում է Երկրորդ համաշխարհային պատերազմում պարտություն կրած Ճապոնիան, որը հայտնվեց ԱՄՆ-ի գերիշխանության տակ: Մոտ յոթ տարի տևած օկուպացիայից հետո Ճապոնիան վերականգնեց իր անկախությունը և ձեռնամուխ եղավ մի շարք տնտեսական բարեփոխումների իրականացմանը, որոնց շնորհիվ շատ կարճ ժամանակահատվածում կարողացավ ոչ միայն դուրս բերել երկիրը ճգնաժամից, այլև արձանագրեց աննախադեպ տնտեսական աճ՝ դառնալով տնտեսական զարգացած երկրորդ պետությունն աշխարհում:

Երկրորդ՝ ***«Ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականության ձևավորումը»*** ենթագլխում անդրադարձ է կատարվում տնտեսական զարգացած տերություն դառնալու հետևանքով Ճապոնիայի նավթային պահանջարկի մեծացմանը: Չունենալով բնական ռեսուրսներ՝ Ճապոնիան տնտեսական հարաբերություններ հաստատեց մերձավորարևելյան երկրների, մասնավորապես Ծոցի նավթարդյունահանող երկրների հետ՝ սկիզբ դնելով մերձավորարևելյան քաղաքականության ձևավորմանը:

Երրորդ ենթագլխում, որը վերնագրված է ***«Ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականությունը նավթային առաջին (1973 թ.) և երկրորդ (1979-1980 թթ.) ճգնաժամերի ընթացքում»***, ներկայացվում է առաջին և երկրորդ նավթային ճգնաժամերի ազդեցությունը Ճապոնիայի տնտեսության վրա, որը ստիպեց Ճապոնիային վերանայել իր քաղաքական դիրքորոշումը մի շարք մերձավորարևելյան խնդիրների նկատմամբ և քաղաքական հարաբերություններ հաստատել նավթարդյունահանող արաբական երկրների հետ:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է՝ **«ԾՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՆ (1981-1990 ԹԹ.)»**: Այն բաղկացած է հինգ ենթագլուխներից:

Առաջին՝ ***«Ծոցի համագործակցության խորհրդի ստեղծման աշխարհաքաղաքական նախադրյալները և կազմակերպության կազմավորման գործընթացը»*** ենթագլխում ուսումնասիրվում են մի շարք աշխարհաքաղաքական նախադրյալներ, որոնք խթանեցին ԾՀԽ-ի ստեղծումը: Դասակարգելով ըստ միջազգային և տարածաշրջանային հարթությունների՝ առանձնացրել ենք հետևյալ գործոնները: Այսպես՝ *միջազգային հարթության* վրա առկա կարևորագույն նախադրյալներից էին՝ 1945 թ. երկրորդ կեսից միջազգային հարաբերություններում ձևավորված ռազմաքաղաքական նոր իրադրության՝ սառը պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև Ծոցում իրենց գերիշխանությունը հաստատելու ուղղությամբ ծավալվող պայքարը, տարածաշրջանի նավթային պաշարներին տիրելու համար ամերիկյան և անգլիական մենաշնորհների միջև ընթացող մրցակցությունը, Արաբական

թերակղզում հետզհետե իր կորցրած քաղաքական և տնտեսական ազդեցությունը վերականգնել ցանկացող Մեծ Բրիտանիայի փորձերը և այլն:

Տարածաշրջանային հարթության վրա առկա նախադրյալներից են՝ Ծոցի երկրների միջև գերիշխանություն հաստատելու համար ընթացող մրցակցությունը, Իրանի իսլամական հեղափոխության արտահանման վտանգը, ինչպես նաև վերջինիս հետևանք հանդիսացած Իրան-իրաքյան պատերազմը, որոնք փաստորեն խթան հանդիսացան Ծոցի համագործակցության խորհրդի ստեղծման համար:

Երկրորդ ենթագլխում՝ ***«ԾՀԽ-ի կառուցվածքը և խորհրդի ներսում առկա հիմնական խնդիրները»***, ներկայացվում է Խորհրդի կառուցվածքը, ԾՀԽ-ի ներսում առկա խնդիրները, որոնք պայմանականորեն բաժանել ենք **երեք կատեգորիաների**՝

1. *տարածքային վեճեր, որոնք առկա են ԾՀԽ-ի անդամ երկրների միջև,*
2. *ֆինանսական, առևտրատնտեսական և մաքսային հարցերի շուրջ տարաձայնություններ,*
3. *տարածաշրջանային և միջազգային բնույթի առանձին խնդիրների շուրջ Խորհրդի ներսում առկա հակասություններ:*

Երրորդ՝ ***«Քաղաքական և տնտեսական հարաբերությունների հաստատումը Ճապոնիայի ու ԾՀԽ-ի անդամ երկրների (ԱՄԷ-ի, Բահրեյնի, Կատարի, Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի, Օմանի) միջև»*** ենթագլխում դիտարկվում են Ճապոնիայի քաղաքատնտեսական հարաբերությունները ԾՀԽ-ի անդամ երկրների հետ, որոնց սկիզբը դրվել էր դեռևս նախքան ԾՀԽ-ի ստեղծումը:

Չորրորդ՝ ***«Նավթային երրորդ ճգնաժամը՝ որպես Իրան-իրաքյան պատերազմի հետևանք: ԾՀԽ-ի անդամ երկրների ու Ճապոնիայի դերը նավթային ճգնաժամի և հակամարտության լուծման հարցերում»*** ենթագլխում ներկայացվում են Իրան-իրաքյան պատերազմի հետևանքով առաջացած նավթային երրորդ ճգնաժամը, վերջինիս ազդեցությունն ինչպես ԾՀԽ-ի, այնպես էլ զարգացած կապիտալիստական երկրների տնտեսության վրա, ՕՊԵԿ-ի փորձը չափաբաժինների սահմանման միջոցով հաղթահարելու նավթային ճգնաժամը, դիտարկվում է ԾՀԽ-ի անդամ երկրների դիրքորոշումն Իրան-իրաքյան պատերազմի հանդեպ, երկու գերտերությունների շահագրգռվածությունն Իրան-իրաքյան պատերազմի միջոցով թուլացնելու երկու երկրների դիրքերը տարածաշրջանում, ինչպես նաև Ճապոնիայի ներդրումը հակամարտության լուծման հարցում:

Հինգերորդ՝ ***«ԾՀԽ-ի անդամ երկրների ու Ճապոնիայի դիրքորոշումն Իրաքի կողմից Քուվեյթի հանդեպ իրականացրած անեքսիայի շուրջ»*** ենթագլխում անդրադարձ է կատարվում Իրաքի կողմից Քուվեյթի բռնակցմանը, ԾՀԽ-ի անդամ երկրների դիրքորոշմանը վերոնշյալ խնդրի շուրջ, միջազգային հանրության միջամտությանը՝ Իրաքի հետագա ագրեսիան կանխելու և Քուվեյթի անկախությունը վերականգնելու ուղղությամբ, ինչպես նաև Ճապոնիայի

աջակցությանը՝ խնդրին շուտափույթ լուծում տալու և Քուվեյթի վնասված տնտեսությունը վերականգնելու ուղղությամբ:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«ՃԱՊՈՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՀԽ-Ի ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԵՏՍԱՌԸՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1991-2011 ԹԹ.)»**, բաղկացած է երկու ենթագլուխներից:

«Ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականության և ռազմաքաղաքական դերի ակտիվացման նոր միտումները հետսառըպատերազմյան շրջանում (1991-2011 թթ.)» վերնագրով ենթագլխում ուսումնասիրվել են հետսառըպատերազմյան շրջանում Ճապոնիայի արտաքին քաղաքականության փոփոխությանը նպաստող գործոնները, ինչպես նաև այն նախադրյալները, որոնք ստիպեցին Ճապոնիային ակտիվացնել իր ռազմաքաղաքական դերը Ծոցի տարածաշրջանում:

Երկրորդ՝ ***«Ճապոնիայի քաղաքատնտեսական հարաբերությունները ԾՀԽ-ի անդամ երկրների հետ (1991-2011 թթ.)»*** ենթագլխում, որն իր հերթին բաղկացած է 6 ենթահարցերից, ուսումնասիրվել են Ճապոնիայի քաղաքական և տնտեսական հարաբերությունները ԾՀԽ-ի անդամ երկրների հետ առանձին-առանձին՝ ընդգրկելով 1991-2011 թթ.:

<u>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ</u> մեջ ամփոփում ենք ատենախոսության հիմնական արդյունքները: Ատենախոսության հիմնահարցերի ուսումնասիրության և նրանց վերլուծության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Ճապոնիայի տնտեսության զարգացումը նպաստեց էներգակիրների պահանջարկի մեծացմանը: Եվ քանի որ Ճապոնիան չուներ բնական ռեսուրսներ և նավթի գները ցածր էին, նա քարածխի հիմքի վրա աշխատող իր արդյունաբերությունը տեղափոխեց նավթի ռելսերի վրա, որը վերջինս ներկրում էր մեծ մասամբ մերձավորարևելյան տարածաշրջանից՝ սկիզբ դնելով Ճապոնիայի մերձավորարևելյան քաղաքականության ձևավորմանը:

2. Մինչ 1973 թ., այսինքն՝ մինչև առաջին նավթային ճգնաժամը, Ճապոնիան պահպանում էր մերձավորարևելյան նավթարդյունահանող երկրների հետ զուտ տնտեսական հարաբերություններ՝ չմիջամտելով քաղաքական գործընթացներին: Սակայն 1973 թ.՝ հերթական արաբ-իսրայելական պատերազմի ավարտից հետո, Մերձավոր Արևելքի նավթարդյունահանող երկրները սկսեցին նավթն օգտագործել որպես քաղաքական զենք՝ էմբարգո դնելով արտահանվող նավթի վրա և նման ձևով ճնշում գործադրելով ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների վրա: Փաստորեն Ճապոնիան նույնպես դասվեց «ոչ բարեկամական» երկրների շարքին: Երկրի տնտեսական շահերը ստիպեցին Ճապոնիային, հակառակ իր դաշնակցի դիրքորոշման, գնալ մի շարք քաղաքական զիջումների նավթարդյունահանող երկրների նկատմամբ:

3. 1979 թ. սկսվեց երկրորդ նավթային ճգնաժամը, որի ժամանակ Իրանը հայտարարեց իր նավթի գինը բարձրացնելու և ԱՄՆ-ի նկատմամբ էմբարգո կիրառելու մասին: Ճապոնիան ԱՄՆ-ի բոլոր հորդորները հակահիրանական

ճնշամիջոցներին միանալու վերաբերյալ թողնում էր անպատասխան և խուսանավման քաղաքականության շնորհիվ շարունակում էր պահպանել տնտեսական և քաղաքական հարաբերություններ Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Փաստորեն հակառակ ձևավորված այն թյուր կարծիքին, որ Ճապոնիան Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դարձել էր ԱՄՆ-ի կամակատարն արտաքին քաղաքականության հարցերում, ծագող արևի երկիրը ճգնաժամային իրավիճակներում միշտ առաջնորդվում էր՝ իր երկրի տնտեսական շահերից ելնելով: Եվ միայն 1980 թ. Ճապոնիան միացավ հակաիրանական տնտեսական ճնշամիջոցին: Իրանից ներկրվող նավթից առաջացած վակուումը Ճապոնիան փորձեց լրացնել նավթարդյունահանող այլ երկրների՝ Վենեսուելայի, Ինդոնեզիայի, Քուվեյթի, Կատարի և Օմանի հետ կարճաժամկետ պայմանագրեր կնքելու միջոցով՝ լավ գիտակցելով, որ Իրանի կառավարությունը չի կարող երկար ժամանակով հրաժարվել նավթի առաքումից, քանի որ այն նրա միակ եկամտի աղբյուրն է:

4. Իրան-իրաքյան պատերազմը, որը հրահրված էր գերտերությունների «լուռ» համաձայնությամբ, միտում ունենալով թուլացնելու Իրանի և Իրաքի դիրքերը տարածաշրջանում, ինչպես նաև խարխլելու ՕՊԵԿ-ի դիրքերը նավթային շուկայում, դարձավ երրորդ նավթային ճգնաժամի պատճառ: Ճգնաժամի ժամանակ նավթի գները դուրս էին եկել վերահսկողությունից և անկանոն անկում էին ապրում՝ մեծ վնաս հասցնելով նավթարդյունահանող երկրների տնտեսությանը: Ինչ-որ առումով Իրան-իրաքյան պատերազմի հետևանքով առաջացած նավթային ճգնաժամը ձեռնտու էր նավթ ներկրող երկրներին, քանի որ նավթի գինն անընդհատ անկում էր ապրում: Չնայած նավթի գնի հաճախակի տատանողականությունը հանգեցրեց արդյունաբերական զարգացած պետություններում (ԱՄՆ-ում, Արևմտյան Եվրոպայի երկրներում և Ճապոնիայում) անկանոն գնաճի առաջացմանը, սակայն վերջիններս կարողացան հաղթահարել և վերահսկողություն սահմանել նավթի գնի նվազման արդյունքում առաջացած գնաճի նկատմամբ: Հատկանշական է, որ չնայած նավթային ճգնաժամին՝ 1987 թ. դրությամբ Ճապոնիայի ՀՆԱ-ն կազմեց 371,1 տրիլ. իեն (2,9 տրիլ. դոլար), իսկ տնտեսական աճը՝ 5%:

5. Թեև երրորդ նավթային ճգնաժամը չունեցավ բացասական ազդեցություն Ճապոնիայի տնտեսության վրա, այնուամենայնիվ Իրան-իրաքյան հակամարտության երկարատև բնույթը բարդացնում էր իրավիճակը կարևորագույն ծովային հաղորդակցության գոտում՝ Հորմուզի նեղուցում, որը Ծոցի երկրներից նավթ արտահանելու հիմնական ճանապարհն էր: Հատկանշական է, որ Հորմուզի նեղուցով էր արտահանվում Ճապոնիա ներկրվող նավթի 50-60%-ը: Բացի այդ՝ պատերազմող երկրներում ընդհատվել էր Ճապոնական մի շարք արդյունաբերական օբյեկտների կառուցումը, ինչը, անշուշտ, մեծ վնաս էր հասցնում Ճապոնիայի տնտեսական շահերին: Այդ պատճառով Ճապոնիայի կառավարությունը փոփոխություններ մտցրեց իր արտաքին քաղաքականության մեջ և ակտիվացրեց իր միջազգային դերն

աշխարհում՝ առաջարկելով միջնորդական միջամտություն՝ հակամարտությանը շուտափույթ վերջ դնելու նպատակով: Սակայն Իրանի կառավարության ժխտողական մոտեցումը հակամարտության գործընթացին որևիցե երրորդ կողմի մասնակցության վերաբերյալ Ճապոնիային ստիպեց որոշակիորեն փոխել իր միջնորդական առաքելության գործելաոճը՝ փորձելով օգտագործել միջազգային կազմակերպությունների, մասնավորապես ՄԱԿ-ի բեմահարթակները՝ դրանով իսկ վստահություն ներշնչելով իր դիվանագիտության հանդեպ և նպաստելով տարածաշրջանում կայունության հաստատմանը:

Իրավիճակը տարածաշրջանում ավելի բարդացավ Ծոցում ամերիկյան ռազմածովային բազա տեղակայելու վերաբերյալ ԱՄՆ-ի վարչակարգի հայտարարությունից հետո: Ավելին՝ Վաշինգտոնը կոչ էր անում իր դաշնակիցներին, այդ թվում Ճապոնիային, միանալ ռազմական գործողություններին: Սակայն Տոկիոն դեմ էր իր երկրի ռազմական ներկայությանը Ծոցում՝ պատճառաբանելով, որ այն հակասում է երկրի «խաղաղ» սահմանադրության դրույթներին: Այսպիսով՝ Ճապոնիայի կառավարությունը, առաջնորդվելով «խաղաղ» սահմանադրության սկզբունքներով և ցանկանալով պահպանել իր կապերը նավթարդյունահանող երկրների հետ, նախընտրեց չաջակցել իր դաշնակցին ռազմական միջամտության իրականացման հարցում, որի պատճառով ԱՄՆ-ի նախագահ Ռ. Ռեյգանը 1987 թ. մայիսին մտցրեց 100% տուրք (մոտ 300 մլն դոլար) Միացյալ Նահանգներ ներկրվող Ճապոնական էլեկտրական ապրանքների վրա: Սակայն դա չկանգնեցրեց Ճապոնիային շարունակելու իր գործունեությունը՝ Իրան-իրաքյան հակամարտությանը խաղաղ ճանապարհով լուծում տալու ուղղությամբ: Այն արտահայտվեց ոչ միայն Իրաքին տնտեսական օգնության տրամադրմամբ, այլև 1987 թ. հունվարին, դառնալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի (ԱԽ) ոչ մշտական անդամ, ունեցավ իր ներդրումը ՄԱԿ-ի շրջանակներում Իրան-իրաքյան ռազմական հետախուզական խումբ (ԻԻՌՀԽ) ստեղծելու գործընթացում, որի հիմնական գործառույթն էր երկու երկրների միջև կրակի դադարեցման վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը: Արդեն 1987 թ. հուլիսի 20-ին ՄԱԿ-ի ԱԽ-ն միաձայն ընդունեց N 598-րդ բանաձևը՝ երկու պատերազմող պետությունների միջև կրակի դադարեցման վերաբերյալ, իսկ 1988 թ. օգոստոսի 20-ին Իրանի և Իրաքի միջև կնքվեց զինադադար:

6. Ճապոնիա-ԾՀԽ քաղաքատնտեսական հարաբերությունները շատ կարևոր են երկու կողմերի համար էլ: ԾՀԽ-ի երկրներն ապահովում են Ճապոնիայի ածխաջրածնի պահանջարկի կեսից ավելին, բացի այդ, հանդիսանում են սպառման մեծ շուկա Ճապոնական ապրանքատեսակների համար: Ծագող արևի երկրի հարաբերությունները ԾՀԽ-ի անդամ երկրների հետ իրականացվում է ինչպես կազմակերպության շրջանակներում, այնպես էլ առանձին-առանձին և չի սահմանափակվում զուտ քաղաքատնտեսական հարաբերություններով՝ ընդգրկելով նաև տնտեսության բազմազանեցման, այլընտրանքային էներգիայի, մասնավորապես ատոմային էներգիայի

զարգացման, մշակույթի և կրթության ոլորտները, ինչն ավելի է խորացնում երկկողմանի հարաբերությունները՝ տալով դրանց ռազմավարական նշանակություն:

7. Ճապոնիան նաև «Պաշտոնական զարգացման աջակցության» (ՊԶԱ) ծրագրի միջոցով ներդրումներ է կատարում ԾՀԽ-ի անդամ երկրներում՝ մասնավորապես տրամադրելով տեխնոլոգիական աջակցություն՝ վերոնշյալ երկրների արդյունաբերության զարգացման նպատակով: Հատկանշական է, որ սառը պատերազմի ավարտից հետո Ճապոնիան մեծ տեղ է տալիս ՊԶԱ-ի ծրագրի շրջանակներում Ծոցի երկրներին տրամադրվող ներդրումներին՝ օգտագործելով այն որպես քաղաքական զենք իր առավելությունը մի շարք երկրներին՝ Չինաստանին, Հնդկաստանին և չորս «ասիական վագրերին»՝ Հարավային Կորեային, Թայվանին, Սինգապուրին և Հոնկոնգին, ցույց տալու համար: Բացի այդ, վերոնշյալ ծրագրի միջոցով Ճապոնիան իրականացնում է իր «Փափուկ ուժի» քաղաքականությունը, որը հատկապես ակնառու դարձավ, երբ հետսառըպատերազմյան շրջանում Ճապոնիան դարձավ ՊԶԱ-ի ծրագրի ամենամեծ դոնորը:

8. Ճապոնիան շահագրգռված է մերձավորարևելյան տարածաշրջանում խաղաղություն հաստատելու հարցում և ֆինանսական աջակցությամբ փորձում է օգնել տարածաշրջանի երկրներին՝ խնդիրները հեշտությամբ հաղթահարելու համար: ԾՀԽ-ի երկրները նույնպես շահագրգռված են տարածաշրջանում խաղաղություն հաստատելու հարցում: Թեև ԾՀԽ-ի երկրների միջև կան շահերի բախում որոշ հարցերի շուրջ, այնուամենայնիվ, Մերձավոր Արևելքում առկա խնդիրների լուծման հարցում անդամ երկրների մոտեցումները մեծ մասամբ համընկնում են:

9. Ճապոնիան և ԾՀԽ-ի երկրները համագործակցում են միմյանց հետ նաև միջազգային խնդիրների լուծման հարցերում: Նման համագործակցությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով Ծոցի համագործակցության խորհրդի երկրները մեծապես աջակցում են Ճապոնիային ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամ դառնալու հարցում:

10. Հետսառըպատերազմյան շրջանում ի հայտ եկած մի շարք նախադրյալներ ստիպեցին Ճապոնիային վերանայել իր արտաքին քաղաքականությունն ինչպես մերձավորարևելյան տարածաշրջանում, այնպես էլ ամբողջ աշխարհում:

Այսպես՝ խթանիչ գործոնների շարքին են դասվում **առաջին հերթին** միաբևեռ համակարգի ստեղծմանը զուգահեռ ձևավորված բազմաբևեռ համակարգը, որի ժամանակ մի շարք պետություններ, ինչպիսին են՝ Չինաստանը, Հնդկաստանը և չորս «ասիական վագրերը», լուրջ մրցակցության հայտ ներկայացրին Ճապոնիային՝ որպես տարածաշրջանային գերտերության:

Երկրորդ գործոնը՝ Ճապոնիայում տեղի ունեցած ներքաղաքական փոփոխությունն էր, որի հիմնական պատճառներից մեկը երկրում սկսված տնտեսական ճգնաժամն էր: Վերջինս 1989 թ. «պղպջակային տնտեսության»

«պայթման» հետևանք էր: Փաստորեն Ճապոնիայում ստեղծված ծանր տնտեսական իրավիճակը նպաստեց երկրում քաղաքական ուժերի փոփոխությանը: Այսպես՝ 1993 թ. վերջ դրվեց 1955 թվականից ի վեր իշխանության ղեկին գտնվող լիբերալ-դեմոկրատական կուսակցության միանձնյա կառավարմանը, և իշխանությունն անցավ կոալիցիոն կառավարությանը, որը համեմատաբար ավելի լիբերալ էր և միջազգային հարաբերություններում փորձում էր դրսևորել ավելի ճկուն քաղաքականություն:

Եվ երրորդ գործոնը՝ Ճապոնիայի միջազգային հարաբերություններում ունեցած ձախողումներ էին, որոնք վերագրվում են 1990 թ. Ծոցում Իրաքի կողմից Քուվեյթի բռնազավթման արդյունքում ի հայտ եկած ճգնաժամին, երբ Ճապոնիան, ելնելով իր «խաղաղ» սահմանադրության դրույթներից, նախընտրեց չմիանալ ԱՄՆ-ի կողմից Իրաքի դեմ կիրառվող պատժամիջոցներին, այլ փորձեց ֆինանսական օգնությամբ աջակցել Քուվեյթին: Սակայն Ճապոնիայի քաղաքականությունը քննադատվեց միջազգային հանրության կողմից՝ անվանելով այն «չեկային գրքույկի դիվանագիտություն»:

Փաստորեն այս բոլոր նախադրյալները խթան հանդիսացան Ճապոնիայի համար վերանայելու իր մերձավորարևելյան քաղաքականությունը և կտրուկ փոփոխման ենթարկելու տարածաշրջանի խնդիրների նկատմամբ ունեցած իր մոտեցումները: Ճապոնիան հասկացավ, որ միջազգային-քաղաքական գործընթացներին անմիջական չմիջամտելու քաղաքականությունը վնասում է իր երկրի շահերին և սկսեց մտածել այդ ոլորտում ավելի մեծ ակտիվություն ցուցաբերելու ուղղությամբ:

11. Ճապոնիան արտաքին քաղաքականության ակտիվացմանը զուգահեռ մեծացրեց նաև իր ռազմաքաղաքական դերը Ծոցում, որի հիմնական պատճառները կապված էին Ճապոնիայի ծովային ուղիների անվտանգության հետ, որին **առաջին հերթին** մեծ վտանգ էին սպառնում Մերձավոր Արևելքում առկա հակամարտությունները, **երկրորդ հերթին՝** Չինաստանի ծավալապաշտական քաղաքականությունը, և **երրորդը՝** ծովահենների և ահաբեկիչների գործողությունները:

Շնորհիվ մի շարք բարեփոխումների՝ Ճապոնիայի ինքնապաշտպանական ուժերը սկսեցին ակտիվորեն հումանիտար մասնակցություն ցուցաբերել մերձավորարևելյան մի շարք հակամարտություններում, և ռազմաքաղաքական դերի ակտիվացման գագաթնակետը դարձավ 2011 թ. Ադենի ծոցում գտնվող Ջիբութի նավահանգստում Ճապոնիայի առաջին ռազմաբազայի տեղակայումը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Энергетическая дипломатия Японии в странах Персидского залива в контексте трех нефтяных кризисов, Япония 2008, Ежегодник, Москва, 2008, с. 52-67.

2. Ճապոնիայի քաղաքականությունը մերձավորարևելյան երկրների նկատմամբ 1973թ. նավթային ճգնաժամի ընթացքում, Արևելասիական ուսումնասիրություններ, I, Երևան, 2009, էջ 129-136:

3. Ճապոնա-իրանական հարաբերությունները նավթային երկրորդ ճգնաժամի ընթացքում, Մերձավոր Արևելք, VI, Երևան, 2009, էջ 124-132:

4. Ճապոնիայի և Քուվեյթի համագործակցության շուրջ, Մերձավոր Արևելք, VII, Երևան, 2011, էջ 159-168:

5. Ճապոնիայի մերձավորարևելյան նոր քաղաքականության ձևավորումը հետսառըպատերազմյան շրջանում (1991-2001թթ.), Արևելասիական ուսումնասիրություններ, II, Երևան, 2011, էջ 104-113:

6. Ճապոնիայի ռազմաքաղաքական դերի ակտիվացումը Ծոցի տարածաշրջանում և «ծովային ուղիների» անվտանգության խնդիրը 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIX, Երևան, 2014, էջ 261-275:

ЕВА АРУТЮНЯН ВИКТОРОВНА

ПОЛИТИКА ЯПОНИИ В РЕГИОНЕ ПЕРСИДСКОГО ЗАЛИВА И СОВЕТ СОТРУДНИЧЕСТВА ЗАЛИВА (1981-2011 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - "Всемирная история".
Защита состоится 18-го ноября 2014 г., в 15:00 часов на заседании специализированного совета 006, действующего при Институте востоковедения НАН РА
(г. Ереван, 0019, пр. Маршала Баграмяна, 24/4)

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению политики Японии в регионе Персидского Залива, ее политических и экономических отношений со странами Совета Сотрудничества Залива (ССЗ), посредством анализа динамики развития отношений и с учетом региональных и международных событий, а также позиции сторон в вопросе решения ряда региональных проблем.

Япония, являющаяся в рассматриваемый период второй экономической сверхдержавой в мире* и не обладающая собственными ресурсами, зависит от импорта энергоносителей, в частности, от стран Персидского залива, поскольку 55% добываемой в регионе нефти экспортируется в Японию, обеспечивая 90% потребностей страны на нефть.

Отношения страны восходящего солнца с арабскими странами региона осуществляются как в рамках организации, так и по отдельности, не ограничиваясь исключительно политическими отношениями, включая также сферы диферсификации экономики, развития альтернативной, в частности, атомной энергии, что еще более углубляет двусторонние отношения, придавая им стратегическое значение.

Комплексное изучение темы важно не только для более глубокого понимания внешней политики Японии в регионе Залива, но и с позиции более точного восприятия подходов как Японии, так и стран – членов ССЗ в вопросе региональных и международных проблем. Актуальность темы исследования обусловлена тем, что изучается динамика развития двусторонних отношений между Японией и странами - членами ССЗ, начиная с создания ССЗ и до 2011 года, охватывая отрезок времени 30 лет.

---

* Япония по данным ВВП до 2010 г. занимала второе место после США. В данный момент занимает третье место после США и Китая.

Диссертация состоит из введения, трех глав, которые в свою очередь делятся на параграфы, заключения, списка использованных источников и литературы, списка использованных аббревиатур, а также приложения.

Во ***введении*** обосновывается актуальность выбора темы, определяются цели и задачи исследования, разъясняется научная новизна, подчеркиваются методологическая основа и практическое значение работы, а также дается краткий обзор использованных источников и литературы.

Первая глава диссертации, озаглавленная ***"Япония в послевоенный период и ее превращение в ближневосточный фактор (1946-1980 гг.)"*** состоит из трех параграфов.

В первом параграфе - *"Послевоенная Япония и ее превращение в экономически развитую страну (1946-1970 гг.)"*, представлена Япония, потерпевшая поражение во Второй мировой войне и оказавшаяся под властью гегемонии США. После оккупации, длившейся примерно 7 лет, Япония восстановила свою независимость и приступила к осуществлению ряда экономических реформ, благодаря которым за короткий промежуток времени сумела не только вывести страну из кризиса, но и отметила беспрецедентный экономический рост, став второй экономический развитой державой в мире.

Во втором параграфе - *"Формирование ближневосточной политики Японии"*, речь идет об увеличении спроса в стране на нефть вследствие того, что страна стала экономически развитой державой. Не имея природных ресурсов, Япония установила экономические отношения с ближневосточными странами, в частности, с нефтедобывающими странами Персидского залива, тем самым положив начало формированию ближневосточной политики.

В третьем параграфе - *"Ближневосточная политика Японии в период первого (1973 г.) и второго (1979-1980 гг.) нефтяного кризиса"*, представляется воздействие первого и второго нефтяного кризиса на экономику Японии, что стало следствием изменения японской ближневосточной политики. Япония, кроме экономических, установила также политические отношения со странами Ближнего Востока.

Вторая глава диссертации - ***«Создание Совета Сотрудничества Залива и Япония (1981-1990 гг.)»***, состоит из пяти параграфов.

В первом параграфе - *«Геополитические предпосылки создания Совета Сотрудничества Залива и процесс формирования организации»,* рассматриваются ряд геополитических предпосылок, стимулировавших создание ССЗ, представляется процесс формирования ССЗ как важнейшего фактора в международных отношениях.

Во втором параграфе - *«Структура ССЗ и основные задачи, присутствующие в рамках Совета»,* представлена структура Совета, а также существующие внутри стран ССЗ проблемы.

В третьем параграфе под названием *«Установление политических и экономических отношений между Японией и странами – членами ССЗ (ОАЭ, Бахрейн, Катар, Саудовская Аравия, Кувейт, Оман)»* рассматриваются политико-экономические отношения между Японией и странами – членами ССЗ, начало которых было положено еще до создания Совета.

В четвертом параграфе, озаглавленном *«Третий нефтяной кризис как следствие Ирано-иракского конфликта. Роль стран ССЗ и Японии в решении проблем нефтяного кризиса и урегулировании конфликта»* представляет возникший в результате Ирано-иракской войны третий нефтяной кризис, его влияние как на ССЗ, так и на экономику развитых капиталистических стран, также рассматривается позиция стран – членов ССЗ по отношению к ирано-иракскому конфликту, вклад Японии в деле урегулирования данного конфликта.

В пятом параграфе - *«Позиция стран – членов ССЗ и Японии в отношении аннексии Кувейта Ираком»,* рассматривается позиция стран – членов ССЗ в отношении аннексии Кувейта со стороны Ирака, вмешательство международной общественности с целью предотвращения дальнейшей агрессии со стороны Ирака и восстановления независимости Кувейта, а также содействие Японии в деле скорейшего решения проблемы и подъема ослабленной экономики Кувейта.

Третья глава диссертации - ***«Политико-экономические отношения Японии со странами ССЗ после завершения периода «холодной войны» (1991-2011 гг.)»***, состоит из двух параграфов.

В первом параграфе - *«Новые тенденции японской ближневосточной политики и активизация ее военной роли после завершения периода «холодной войны» (1991-2011 гг.),* были изучены факторы, способствующие изменению внешней политики Японии в период после завершения «холодной войны», а также предпосылки, вынудившие Японию активизировать свою военно-политическую роль в регионе Персидского залива.

В последнем параграфе, озаглавленом *«Политико-экономические отношения Японии со странами – членами ССЗ (1991-2011 гг.)»*, состоящий в свою очередь из 6 частей, были изучены политические и экономические отношения Японии с отдельно взятыми странами ССЗ с 1991-го по 2011 годы. После завершения «холодной войны» страна восходящего солнца придает огромное значение инвестициям, предоставляемым странам Залива в рамках программы «Официальная помощь развитию» (ОПР), используя их в качестве «политического оружия», с помощью которого она проводит политику «мягкой силы».

Япония и страны ССЗ сотрудничают также в вопросах решения международных проблем. С целью сделать подобное сотрудничество более продуктивным страны ССЗ содействуют Японии в вопросе постоянного членства в Совете безопасности ООН.

В **заключении** подводятся основные итоги диссертационной работы.

YEVA HARUTYUNYAN

THE POLICY OF JAPAN IN THE REGION OF THE PERSIAN GULF AND THE GULF COOPERATION COUNCIL (1981-2011)

The defense of the dissertation will take place at 15:00, on the 18th of November, 2014 at the meeting of the Specialized Council 006 "World History" at the Institute of Oriental Studies of the NAS RA.

Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World history" 07.00.02.

SUMMARY

The thesis concerns Japan's policy in the Persian Gulf region, the study of its political and economic relations with the member-states of the Gulf Cooperation Council by analyzing the development process and taking into account both the regional and international developments, as well as the position of the sides over the solution of a number of regional issues.

Being the world's second largest economic superpower* in the discussed period and being devoid of natural resources, Japan is strongly dependent on energy imports, particularly on the Gulf states, as 55% of the extracted oil of the region is exported to Japan, providing 90% of the country's oil demand. For this reason the Gulf is a region of vital importance to the Japan's economy. The relations of the Land of the Rising Sun with the Arab states of the Gulf are performed within Gulf Cooperation Council, as well as separately and are not restricted to the political and economic relations, but they also include diversification of economy, the development of alternative energy and particularly of nuclear energy, fields of culture and education, which deepens the two-sided relations, giving them strategic importance.

The comprehensive study of the topic is important not only for understanding Japan's foreign policy in the Gulf states but also for perceiving both Japan's and the GCC member states' approaches to regional and international issues more precisely.

The actuality of the research topic is conditioned by the fact that it is studied the dynamics of the development of bilateral relations between Japan and the GCC member states from the founding of GCC till 2011, covering the history of 30 years.

The thesis consists of an introduction, three chapters, which are subdivided into subchapters, a conclusion, a list of source and bibliographic references, a list of abbreviation and an Appendix.

* Until 2010 according to the GDP data, Japan was on the second place, after the United States. Now it's on the third place after the USA and China.

In the **Introduction** there the actuality of the topic and scientific innovation are grounded, the main objectives and the purpose and the choice of chronological limits are represented, a brief review of the list of sources and bibliographic references and the degree of study of the topic are given.

The first chapter of the thesis ***"Japan in the Post-War Period and Its Outgrowing into a Middle Eastern Factor (1946-1980)"*** consists of three subchapters.

The first subchapter *"Post-war Japan and its Outgrowing into a Developed Economical Country (1946-1970)"* introduces defeated in World War II Japan, that was under US dominance. After nearly seven years of occupation Japan regained its independence and initiated a number of economic reforms, due to which in a very short period of time it not only managed to bring the country out of the crisis but also recorded unprecedented economic growth becoming the second developed economic country in the world.

In the second subchapter *"The Formation of Japan's Middle Eastern Policy"* a reference is made to the growth of Japan's oil demands as a result of becoming a developed economic country. Lacking natural resources, Japan established economic relations with Middle Eastern states, particularly with oil producing states of the Gulf, thus formatting the Middle Eastern policy.

The third subchapter which is entitled *"Japan's Middle Eastern Policy during the First (1973) and the Second (1979-1980) Oil Crises"* represents the influence of the first and the second oil crises on the economy of Japan, which promoted the alteration of Japan's Middle Eastern policy. Besides economic relations Japan also established political ones with the states of Middle East.

The second chapter of the thesis is entitled ***"The Founding of the Gulf Cooperation Council and Japan(1981-1990)"***. It consists of five subchapters.

In the first subchapter *"The Geopolitical Preconditions of the Founding of the Gulf Cooperation Council and the Formation Process of the Organisation"* a number of geopolitical preconditions, which promoted the founding of the GCC are studied, the formation process of the GCC is shown as a vital international factor.

In the second subchapter *"The Structure of the GCC and the Main Problems within Council"* the structure of the Council and a number of existent problems within the GCC are represented.

In the third subchapter *"The Establishment of the Political and Economic Relations between Japan and the GCC Member States (UAE, Bahrain, Qatar, Saudi Arabia, Kuwait, Oman)"* Japan's political and economic relations with the GCC member states are considered, that have been established before the founding of the GCC.

The fourth subchapter *"The Third Oil Crisis as a Result of Iran–Iraq War. The Role of the GCC Member States and Japan in Oil Crisis and Conflict Solution Issues"* represents the third oil crisis as a result of Iran-Iraq war, the position of the GCC member states to Iran-Iraq war and also Japan's contributions to the issues of solution of the conflict.

In the fifth subchapter *"The Position of the GCC Member States and Japan to Iraq's Annexation of Kuwait"* a reference is made to Iraq's annexation of Kuwait, the position of the GCC member states to the above-mentioned issue, intervention of the international community to prevent Iraq's further aggression and to restore the independence of Kuwait, and also Japan's support towards urgent solution of the problem and reconstruction of Kuwait's damaged economy.

The third chapter of the thesis ***"Japan's Political and Economic Relations with the GCC Member States during Post Cold War Period (1991-2011)"*** consists of two subchapters.

Subchapter entitled *"The New Tendencies of Japan's Middle Eastern Policy and Activation of Its Military Role during Post Cold War Period (1991-2011)"* studies the factors that contribute the changes of Japan's foreign policy, as well as other preconditions that made Japan to increase its military role in the Gulf region.

The final subchapter *"Japan's Political and Economic Relations with the GCC Member States (1991-2011)"*, which in its turn consists of six sub-questions, studies Japan's political and economic relations with the member states of the GCC separately, covering the period between 1991-2011. Japan-GCC political and economic relations are very important for the both sides. Furthermore after the end of the Cold War the Land of the Rising Sun gives much importance to the investments to the Gulf states within Official Development Assistance (ODA's) program, using it as a "political weapon" through which it carries out its "soft power" policy. Japan and the GCC states cooperate with each other on international issues as well. To make this kind of cooperation more effective the GCC states strongly support Japan in the issue of becoming a permanent member of the United Nations Security Council.

In the **Conclusion** the main results of the thesis are summarized.